ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ

ՈՒՇԻԻ Ս. ՍԱՐԳԻՍ ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՒ ՈՍԿԱՆ ԵՐԵՒԱՆՑԻՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արշավախումբը (ղեկավար Ֆրինա Բաբայան, գիտական խորհրդատու Արամ Քալանթարյան, ճարտարապետներ՝ Գրիգոր եւ Կորյուն Ղաֆադարյաններ) 1999-2001 թթ. պեղումներ է իրականացրել Ուշիի Ս. Սարգիս վանահամալիրում:

Համալիրը գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակի ենթաշրջանի Ուշի գյուղից մոտ 300 մ հյուսիս-արեւմուտք, բարձունքի հարավային սփոռոտում Ք. ծ. ա. Բ.-Ա. հազ. բնակավայրի եզրին:

Վանքի շինությունները կառուցվել են Ե.-ԺԸ. դդ. տարբեր ժամանակահատվածներում: Բոլորը կործանվել են 1827 թ. երկրաշարժի հետեւանքով: ԺԹ. 30-ական թվականներից Ուշի այցելած ճանապարհորդներն ու ուսումնասիրողները վանքի պատմությանը նվիրել են աշխատություններ, որոնք սակայն գրվել են այն ժամանակ, երբ շինություններն արդեն թաղված են եղել հողի սփվար շերտի տակ: Նրանց բոլորի ցանկությունն է եղել վանական համալիրը պեղված եւ ուսումնասիրված տեսնելը (Հովհաննես եպս. Շահխաթունյանց, Ղեւոնդ Ալիշան, Խաչիկ վրդ. Դադյան եւ ուրիշներ)[1]: Տարիների երազանքը իրականացվեց միայն Երեւանի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի դեկան Գերաշնորհ Տեր Շահե արքեպ. Աճեմյանի հոգածությամբ: Շահե Աճեմյանի հայրենանվեր գործունեության գագաթնակետն էր Ուշիի Ս. Սարգիս վանական համալիրի պեղումների իրականացումը: Հավատարիմ իր գաղափարին՝ առ Աստված, Եկեղեցի եւ Հայրենիք, նա երեք տարի շարունակ յուրաքանչյուր շաբաթվա մեկ օրը տրամադրում էր վանքին: Մասնակցում էր հնագիտական աշխատանքներին, հետաքրքրվում հայտնաբերված նյութերով, սիրով զրուցում ուշեցի բանվորների հետ, լուռ փնտրում էր Ոսկան Երեւանցու ձեռագիր Աստվածաշնչից գեթ մի փոքրիկ պատառիկ... Ցավոք չէր կարող գտնել ոչ մի պատառիկ, քանի որ

1 Տե՛ս «Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ», աշխատ.՝ Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանցի, հ. Բ., Էջմիածին, 1842, էջ 118-120. **Ղ. Ալիշան**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 181. **Կ. Կոստանեանց**, Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 107-164. **Ռ. Գասպարյան**, Ուշիի Ս. Սարգիս վանքի վիմագրական արձանագրությունները. «Լրաբեր», 1993, թ. 1, էջ 130-136:

մինչեւ երկրաշարժը՝ 1779 թ. Վրաց Հերակլ թագավորը Հուսեյին խանից չստանալով իրեն հասանելիք հարկը՝ գրավեց Երեւանը, կոտորեց բնակչությանը, ավերեց գյուղերը, թալանեց 30-ից ավելի եկեղեցիներ:[2]

1654-1662 թթ. Ոսկան Երեւանցին Ս. Սարգիս վանքի վանահայրն է եղել: Ոսկանը ծնվել էր Իսպահանում 1614 թ.: Աշակերտել է Խաչատուր Կեսարացուն: Էջմիածնում ծանոթացել եւ մտերմություն է արել դոմինիկյան լատին կրոնավոր Պողոս Փիրոմալիի հետ, որը փորձում էր Հայոց Եկեղեցին հռոմեական եւ քաղկեդոնական դարձնել: Ուշիմ եւ կրթության կարոտ Ոսկանը նրանից պարզապես սովորեց լատիներենը եւ գիտելիքներ կորզեց: Դարձավ ժամանակի ամենակրթված եւ զարգացած հայ մտավորականներից մեկը: Ուշիմ ութ տարիների ընթացքում նա ոչ միայն աշխատում էր իր ձեռագրի վրա[3], այլ վանքի պարսպի ներսում եւ արտաքին կողմում կառուցում եւ վերակառուցում էր բազմաթիվ շինություններ, որի մասին կարեւոր տեղեկություններ է հաղորդում Առաքել Դավրիժեցին. «այս վանքս նորոգեցաւ ձեռամբ Ոսկան վարդապետին, որ էր ինքըն յԵրեւան քաղաքէն եւ յաշակերտաց Փիլիպոսի Կաթուղիկոսին: Զի թէպէտ կայր եկեղեցին վայելուչ եւ սրբաշէն եւ բաձրաբերձ կաթուղիկէիւ, այլ տանիք եկեղեցեացն ամենեցուն քանդեալք եւ աւերեալք էին... Իսկ Ոսկան վարդապետս թէպէտ ոչ կարաց նորոգել զտանիքն եկեղեցեացն, զի որ ունէր այնքան գոյս, այլ մեծաւ տաժանմամբ եւ բազում աշխատութեամբ պեղեաց զչորս կողմն եկեղեցւոյն, եւ պատեաց շուրջանակի պարիսպ յոյժ ամուր, եւ ի մէջ պարսպին շինեաց ըստ պատշաճին խցեր եւ տներ եւ ինքն կայ անդէն բարուք կարգաւորութեամբ յուսացեալ յողորմութիւնն Աստուծոյ բարեխոսութեամբ սրբոյն Սարգսի զօրավարին»[4]:

Պեղումների արդյունքները ոչ միայն հաստատում են վանքում կատարած նրա շինարարական աշխատանքների մասին, այլեւ օգնում են որոշակի գիտական լրացումներ անել: Այն է՝ վանքի գլխավոր մուտքի, կամարասրահի, պարսպի, վանահյուսերի շինարարական եւ ճարտարապետական մանրամասները թույլ են տալիս ասելու, որ հոգեւոր շենքերը ԺԲ.-ԺԳ. դդ. արդեն շրջափակված են եղել քարակերտ պարսպով: ԺԶ. դ. կառուցած վանահյուսերի, տնտեսական սենյակների եւ մյուս կառույցների հատակների տակ առանձնացվում են ԺԲ.-ԺԳ. դդ. մշակութային շերտերը, նույն դարաշրջանին բնորոշ խեղեցեն բեկորներով: Ոսկան Երեւանցու կատարած շինարարական եւ վերակառուցման աշխատանքները մի նոր որակ են հաղորդել վանքին:

Ոսկան Երեւանցու վերակառուցած պարիսպը ներկայումս պահպանվել է ողջ շրջագծով, տեղ-տեղ մինչեւ 3 մ բարձրությամբ: Այն իր մեջ է առնում ողջ համալիրը, շարված է կավաշաղախ հիմքի վրա՝ կոպտափաշ բազալտե քարերով, որոնք վերցված են Ք. ծ. ա. Բ.-Ա. հազ. ամրոցի շինություններից: Պարսպի անկյուններում կան հզոր, ներսից կրկնահարկ աշտարակներ, հատակագծում երեքը՝ կլոր, երկուսն՝ ուղղանկ-

2 Տես **Մաղաքիա արքեպ. Օրմանեան**, Ազգապատում, Բ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3605:
3 Տես «Սիոն», 1966, թ. 10-12, էջ 548-549 գրիչ Ոսկան վարդապետ, վայր Ցուշի:
4 «Առաքել վարդապետի Դավրիժեցոյ Պատմութիւն», Վաղարշապատ, 1884, էջ 270:

յուն: Բացվել է վանքի գլխավոր մուտքը պարսպի հարավ-արեւելյան անկյունում (լայն. 1.95 մ):

Գլխավոր մուտքից արեւմուտք, հարավային պարսպապատին կից, 3-4 մ խորություն ունեցող հողաբլրի փակից պեղումներով բացվել են շինություններ, որոնք նույնպես կապվում են Ոսկան Երեւանցու շինարարական գործունեության հետ: Ուշադրության է արժանի պարսպի հարավային պատին կցված սյունազարդ սրահը (4.5x7.0 մ), նրա շարունակությունն է թաղակապ մեծ սրահը (թերեւս հյուրատուն կամ գրատուն)՝ հինգ բաժանմունքներով: Վերջինիս կարմիր տուֆ քարերով շարված կամարները բավականին լավ են պահպանվել:

Հարավային պարսպի ուղղությամբ, դեպի արեւմուտք բացվել են մի քանի կրկնահարկ շինություններ, որոնց ներքին հարկերը թաղածածկ են:

Ս. Սարգիս մատուռից հյուսիս-արեւմուտք բացվել է երկու բաժանմունք ունեցող կամարակապ կառույց՝ բուխարիով, որը կարող էր իբրեւ սեղանատուն ծառայել: Փլատակների միջից բացվել են վանքի հյուսիսային պարսպի երկայնքով տեղադրված վանահյուցերը: Ընդհանուր միջանցքներով իրար հաղորդակցվող սույն շինությունները մի առանձին ճարտարապետական համակառույց են կազմում Ս. Սարգիս վկայարանի (Ե. դ.), Ս. Աստվածածին եկեղեցու (ԺԱ.-ԺԲ. դդ.) եւ գավիթի (1264 թ.) հոգեւոր կառույցների շարքում: Վանահյուցերը հոգեւոր շինությունների հետ կապվում են առանձին քարե աստիճաններով[5]: Ճարտարապետական ներդաշնակ համակառույցն ամփոփում է միջնադարյան հայկական շինարվեստի շատ նորություններ (հարդարանքի բազմաձեւություն, բազմերանգ շինանյութի օգտագործում, որմնամույթեր, թաղածածկ եւ բազմանիստ գմբեթակիր տանիքներ եւ այլ մանրամասներ):

Պեղումների ժամանակ հայտնաբերվել են ԺԲ.-ԺԸ. դդ. թվագրվող կավանոթներ, քրեղաններ, ապակյա սրվակներ, մետաղե, քարե գործիքներ, մի քանի դասնյակի հասնող խաչքարեր:

Պեղման դարաձքում ԺԲ.-ԺԴ. դդ. թվագրվող շերտը Վաչուտյանների տիրապետության ժամանակաշրջանին է պատկանում: ԺԷ.-ԺԸ. դդ. թվագրվող ժամանակահատվածը կապվում է Ոսկան Երեւանցու ծավալած շինարարական գործունեության հետ: Պեղումներով բացված այս կառույցներում բազմաթիվ նյութերի ուղեկցությամբ հայտնաբերվել են եւ հախճապակի անոթներ, որ իրավամբ կարող ենք Ոսկան Երեւանցու սպասք անվանել: Վերջիններս գեղարվեստական մեծ արժեք են ներկայացնում: Հիմնականում կապույտ գույնի, բուսական ճյուղերով, շքեղ ծաղկաթերթիկներով, պտուղներով ծանրաբեռնված պատկերներ են: ԺԶ.-ԺԷ. դդ. արտաքին առեւտրի միջոցով Հայաստան ներմուծված հախճապակին կարող էր դառնալ եւ Ուշիի վանական միաբանության առանձին օգտագործման սպասք, հատկապես Ոսկան Երեւանցու

5 Տես **Ֆ. Բարայան, Ա. Քալանթարյան**, Ուշիի Ս. Սարգիս վանքը, Աճեմյան մատենաշար, Երեւան, 2002, էջ 236-247:

վարդապետության օրոք, որին հասու էին թեև մահմեդական աշխարհում եւ թեև եւրոպական աշխարհում տեղի ունեցող արտադրական նորամուծությունները: «Սրոպեաճեմ» եւ «քրոփեազարդ» տաճարը[6] իրավամբ պետք է ունենար շքեղ սպասք:

1656 թ. Ոսկան Երեւանցին Ուշիում էր: Նույն թվականին Հակոբ Դ. Ջուղայեցի Կաթողիկոսի կարգադրությամբ Մատթեոս Ծարեցին մեկնում է Եւրոպա տպագրական գործերով: 1660 թ. վերջապես ստեղծվում է բաղձալի տպարանը: Սկսում են տպագրել Ծնորհալու «Յիսուս որդի»-ն: Սակայն նրան չհաջողվեց տեսնել իր տպարանի հաջողությունը. 1661 թ. թշվառության եւ միայնության մեջ մահացավ ողբերգորեն: Այդ ծանր պահին առեւտրական գործերով Ամստերդամում գտնվող նորջուղայեցի վաճառական Ավետիս Ղլիճենցը վճարում է Ծարեցու պարտքերը՝ ոչ մի շահույթ չպահանջելով դրամի դիմաց: Նա մեծ դժվարությամբ ավարտում է «Յիսուս որդու» տպագրությունը: Հայկական տպարանը պահպանվում է: Տպարանը կոչվում է Ս. Էջմիածնի եւ Ս. Սարգիս զորավարի անուններով[7]:

Ուշի գյուղի Ս. Սարգիս վանքի հիշատակությունը այս անվան հետ պատահական չէր: Այնտեղ վանահայր էր Ավետիսի եղբայր Ոսկան Երեւանցին՝ ժամանակի մեծ մտավորականը: Նրան է Ավետիսը հրավիրում Ամստերդամ՝ հրատարակչական գործը գլխավորելու: Հայ գրքի պակասը լրացնելու փափագով Ոսկան Երեւանցին թողնում է Ուշիի Ս. Սարգիս վանքը, Էջմիածնում ձեռնադրվում եպիսկոպոս եւ մեկնում Եւրոպա[8]:

1664 թ. Ոսկան Երեւանցին հասնում է Ամստերդամ, 1668 թ. լույս է տեսնում Ոսկանյան Ասպվածաշունչը (1462 էջ, 159 նկար), որը համարվում է տպագրության պսակը, ինչպես Ասպվածաշնչի Սահակ-մեսրոպյան թարգմանությունները: Ս. Էջմիածնի եւ Ուշիի Ս. Սարգսի անվան տպարանը գործեց քառորդ դար, հրատարակեց շուրջ քառասուն անուն հայերեն գրքեր: Ոսկանյան տպարանի աշխատանքով սկիզբ առավ հայերեն տպագրությունը[9]: Այսպես է գնահատում Ոսկան Երեւանցուն Մաղաքիա արքեպ. Օրմանյանը. «Ոսկանի անձնաւորութիւնը արժանի է մեր ազգին մտաւոր զարգացման տեսակէտէն մեծ երախտաւորներու կարգը դասուիլ, եւ հայ տպագրութեան իսկապէս մղումը տուողը ճանչցուիլ: Նախընծայ տպագրութիւն ճանչցուած 1512 եւ 1513 տարիներու Յակոբի հրատարակութիւնները, միայն ժամամակագրական փառք մը ունեցան, առանց իրական օգուտի: Ոսկանի գործն է, որ իր տարաբախտ մահուանէ ետքն ալ շարունակեց եւ չորացած բույսէ մը թափուած սերմերու նման բողբոջները բազմացան»:[10]

---

6 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ (1941-1960)», էջ 750. տես **Ֆրինա Բաբայան**, Ուշի Սուրբ Սարգիս վանքի պեղումներից հայտնաբերված հաճխապակին. «Հին Հայաստանի մշակույթը XII», Երեւան, 2002, էջ 103:

7 Տես **Ռ. Ա. Իշխանյան,** Հայ գիրքը 1512-1920, Երեւան, 1951, էջ 58-63:

8 Տես **Գարեգին Լեւոնյան**, Հայ գիրքը եւ տպագրության արվեստը, Երեւան, 1946, էջ 101-113:

9 **Ռ. Իշխանյան,** Հայ գրքի պատմություն, Երեւան 1977, էջ 405-528:

10 **Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան,** Ազգապատում, Բ, էջ 2954:

Պարսպի տակ կառուցված
վանախցերի մնացորդները



Ս. Աստվածածին եկեղեցու վերականգնման նախագիծ
(ճարտարապետներ Գրիգոր եւ Կորյուն Ղաֆադարյաններ)

Հախճապակե բասեր ԺԶ.-ԺԷ. դդ.

Ս. Սարգիս մատուռ-վկայարանը
վերականգնված

Ս. Սարգիս մատուռ-վկայարանը

Անդրադառնալով Ուշիի վանքի ընդհանրական անվանը՝ Սուրբ Սարգիս Զորավար, ասենք, որ Սարգիսը մեռնող եւ հարություն առնող հին ասպվածությունների ժառանգորդության նոր քարոզի մարտիրոսն էր IV-V դդ.: Ուրեմն պատահական չէ, որ վանքի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին բացված վիմագրում իշխանաց իշխան Վաչեն ծառզարդարի ծիսական արարողությունը կարգադրել է կատարել Ս.Սարգիս վանքում: Իսկ Սուրբ Սարգսի եւ Մեսրոպ Մաշտոցի ավանդապատման իրական պեղեկությունն այն է, որ երկուսի գործունեությունն էլ ուղղված է եղել քրիստոնեության տարածմանը: Մեսրոպ Մաշտոցը հայ եկեղեցու ծիսակատարության, հայացման ջատագովներից էր եւ հոգեւոր գրականության հայերեն թարգմանության հիմնադիրներից: Նրանից ավելի քան մեկ հազարամյակ հետո Ոսկան Երեւանցին շարունակել է այդ ջանքերը՝ դրանք գործադրելով հանուն հայ տպագրության:

Պեղումներով բացված վանական համալիրի բացառիկ արժեք ներկայացնող շինությունները (պեղումներից հետո) մնացել են առանց ամրացման եւ վերականգնման՝ հիրավի վտանգված են: Դրանք ոչնչացումից փրկելու համար անհրաժեշտ է շուտափույթ ձեռնամուխ լինել համալիրի վերականգնման աշխատանքներին: 2004թ. վերականգնվել է Ս.Սարգիս եկեղեցի-վկայարանը: Կաթողիկե եկեղեցու վերականգնման բարձր գնահատականի արժանացած նախագիծը (ճարտարապետներ Գրիգոր եւ Կորյուն Ղաֆադարյաններ) պատրաստ է: Հարկ է նաեւ ըստ արժանվույն գնահատել Ոսկան Երեւանցու երախտիքը եւ նրա հուշարձանը կանգնեցնել վանքի տարածքի համապատասխան տեղում: